

## ՀԱՅԱՍՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԶԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

### ՀԱՄԱՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Մոտ կեւ միլիոն թրքախոս հայեր են ապրել Օսմանյան կայսրութեան արեւելյան նահանգներում՝ Արեւմտյան Հայաստանի իրենց պատմական բնակավայրերում: Նրանց մեծ մասը ստիպված է թրքախոս դարձել: Հայ ժողովրդի ահա այս հատվածի համար, ովքեր կորցնելով սեփական լեզուն, այնուամենայնիվ, պահպանել էին ազգային ինքնագիտակցութիւնը, ավանգույթները, գովանանքը (եթե անգամ բռնի ուժով դավանափոխ են արվել), ստեղծվել է հայատառ թուրքերեն գրականութիւնը: Այն կոչված էր զերծ պահելու արեւմտահայութեանը ուժացման վտանգից, նրանց հաղորդակից դարձնելու համար ազգային զարթոնքին ու մտավոր վերելքին: Հայատառ թուրքերեն գրականութիւնը հայոց մշակույթի անքակտելի մի մասն է կազմում, հայագիտութեան մի ուրույն ու անկախ բնագավառը, որը, հանիրավի, մոռացութեան է մատնված մեր ուսումնասիրողների կողմից և մնացել է ստվերում: Այս գրականութիւնը զարգացել է հայալեզու գրականութեանը զուգահեռ, անկախ նրա վերելքի ու վայրէջքի շրջաններից: Հայատառ թուրքերեն գրականութիւնն ունի շեշտված ազգային նկարագիր և չափազանց բազմաշերտ է: Այն արեւմտահայ իրականութեան ուսումնասիրութեան աղբյուրներից է և կարևոր աղբյուր՝ Օսմանյան կայսրութեան սոցիալական, տնտեսական, քաղաքական իրավիճակի, հպատակ ժողովուրդների մշակութային, ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրութեան համար:

Հայերի թրքախոս հատվածի համար ստեղծված գրականութիւնն այնպիսի զարգացում է ապրել, որ դուրս է եկել իր նախնական առաքելութեան շրջանակներից, մեծապես ծառայել ոչ միայն արեւմտահայութեան թրքախոս ու հայախոս հատվածներին, այլև՝ Օսմանյան կայսրութեան ժողովուրդների մշակույթի ու կենցաղի անհրաժեշտ մի մասը դարձել: Հայերեն տառերը սովորելով՝ թուրքերեն իմացողները (մասնավորապես թուրք պալատական, մտավորական խավը, կայսրութեան բազմազգ ժողովուրդների գրասեր մասը) դարձել են հայատառ թուրքերենի կրողներ, ամենատարբեր բնագավառներում այն օգտագործողներ: Միջին դարերում ահա այս գործում անուրանալի նշանակութիւն է ունեցել բառարանագրութիւնը: Դրանով է պայմանավորվել հետագա դարերում թարգմանական գրականութեան բուռն զարգացումը:

Մեզ հետաքրքրող նյութի հետ առնչվող առաջին օրինակը 13-րդ դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»-ի մեջ 60 մոնղոլերեն բառերի ցանկն է՝ բացատրութիւններով հանդերձ<sup>1</sup>: Այս ցանկ-բառա-

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 272-7 (բառարան):

րանը հանդիսանում է ոչ միայն հայ պատմագրություն մեջ հայատառ մոնոգրիֆերենի հնագույն գրառումը, այլև մոնոգրիֆերեն լեզվի գոյություն ունեցող նմուշների մեջ հնագույնը: Այն մոնոգրիֆերեն գրականության հնագույն հիշատակարան են համարել էդ. Դյուլորիեն, Ն. Աճառյանը: Դրա գիտական գնահատությունն անդրադարձել է Կ. Մելիք-Օհանջանյանը:

Հայատառ մոնոգրիֆերեն (մասամբ՝ թաթարերեն) բառարանին 16–17-րդ դարերում փոխարինելու են գալիս հայատառ դիֆաղերեն (կոմաներեն) բառարանները՝ կազմված Հունդարիայում, Լեհաստանում:

Հայատառ թուրքերեն ձեռագիր բառարանների մասին թուրքական գիտական «Tarih ve Toplum» ամսագրում մի հոդված է տպագրել պոլսահայ գիտնական Գեորգ Բամպուլջյանը<sup>2</sup>: Հայատառ թուրքերեն գրչագրերի ձեռագրացուցակ կազմելու մեր ուսումնասիրությունների ժամանակ բառարանների մասին մեր նյութը համարյա կրկնապատկվել է: Վաղ՝ 16–17-րդ դդ. մեզ հետաքրքրող բառարանները հիմնականում գտնվում են Վիեննայի կայսերական մատենադարանում<sup>3</sup>, Մխիթարյան միաբանությունում<sup>4</sup>, Լվովում: Ձեռագիր բառարաններ կան Երևանի մատենադարանում, Արևելքի, եվրոպական երկրների, ԱՄՆ-ի առանձին գրագարաններում, մասնավոր հավաքածուներում:

Բառարանների առաջացումը միշտ էլ նույն դրգապատճառներն է ունեցել՝ նպաստել տարբեր լեզուներով խոսող ժողովուրդների միջև հաղորդակցությունը: Բնականաբար, առաջին հերթին նկատի է առնվել սեփական ժողովրդին նոր լեզու կամ նոր հնարավորություն ընձեռելու կարևորությունը՝ դրանից հետևող բազմաթիվ մեծ ու փոքր արգասաբեր առավելություններով: Գալով բառարաններին, ապա մեզ, բնականաբար, հետաքրքրում են այնպիսիք, ուր օսմաներենն արտահայտված է ոչ թե արբատառ, այլ հայատառ: «Յամի տեառն 1772, Յուլիսի դրեցեալ եզեւ յումեմնէ աշխատասիրէ Գէորգ կոչեցելոյ Կոստանդնուպոլսեցւոյ Պալատականէ, որ զգիրքս զայս ի հայ գիր փոխարկեաց անձնաձիր տքնութեամբ, յեղյեղելով զբառարանս վասն ուղիղ եւ անվրէպ առնելոյ զսա եւ վասն օգտի ընթերցասիրաց եւ լսողաց ի փառս Աստուծոյ...», – գրել է Հայտնի լեզվաբան և պատմաբան Գևորգ Տեր-Հովհաննիսյանը (1736–1811)՝ Քյաթիպ Չելեսյիի (Հաճի Մուստաֆա Խալիֆե) «Թագվիմիլթ Թէվա-

<sup>2</sup> K. P a m u k c i y a n. Ermeni Harfli Türkçe Yazma Sozlükler – “Tarih ve Toplum”. Ist. 1986 ocak, N25. Հայագիտության մարզում մեծ ավանդ ունեցող այս համեստագույն ուսումնասիրողը ժամանակ առ ժամանակ, իսկ 1980-1990-ական թթ. ավելի հաճախ թուրքական գիտական մամուլում հանգես է եկել հայագիտական հոդվածներով, որոնք այս կամ այն կերպ առնչվում էին թուրքական միջավայրի հետ: Մեզմ գրելաոճով, սակայն հիմնավոր կովաններով համարձակվել է հերքել հայերի դեմ դրված հոդվածները, զգացնել տալով դիմացիների նյութի սնանկությունը, խեղաթյուրումների ու «թուրքացնելու» կանխամտածված հակումները: Գեորգ Բամպուլջյանը մեծապես հենվելով Հակոբ Անասյանի «Հայկական մատենագիտության» վրա՝ Հայատառ թուրքերեն թվարկելու համար երեք մասի է բաժանում հայ-թուրքերեն, թուրք-հայերեն և բազմալեզու: Նա նշում է ընդհանուր առմամբ 44 բառարան (նկարագրությունը տես՝ Ն. Ս. Ա ն ա ս յ ա ն, Հայկական Մատենագիտություն Ե-ԺԸ դդ. – Բառարանագրական նյութեր, հ. Բ, Երևան, 1976, 1178-1242 սուրնակ):

<sup>3</sup> Ձեռ. 3. 1638-ից առաջ. 1-106ա. Բառագիրք Հայերենէ թաթարերէն, տես՝ Յ. Տ ա շ ե ա ն, Ցուցակ հայ ձեռագրաց Կայսերական մատենադարանին ի Վիեննա, Վիեննա, 1891, էջ 9:

<sup>4</sup> Ձեռ. 1131, 1613 թ. Բառգիրք 1ա-բ, 51ա-56ա, 70բ կես էջը՝ հթ. և Ձեռ. 672, Բառգիրք, Ժէ դ. նկարագրությունը տես՝ Յ. Տ ա շ ե ա ն, հ. Ա. 1895:

րիխ» աշխատության թարգմանության առթիվ թողած հիշատակարանում (Փարիզի Աղգալին դրադարանի ձեռ. 317-ում)<sup>5</sup> :

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 3522, № 3883 ձեռագրերը՝ «Քերականութիւն զփչազ լեզուի»: Դրանք միաժամանակ երկսյուն բառարաններ են, կազմված ըստ «Քերականութեան» մաս կազմող բաժինների: Օրինակ. 336ա-342ա՝ «Հոլով անւանց՝ ուղղական-դողրու» և այլն: 18-րդ դ. Հայ-ղփչաղերեն(Հայկոմաներեն) բառարանի 170 էջանոց մի ձեռագիր էլ գտնվում է Հունգարիայի Գեոլա քաղաքում: Հայատառ զփչաղերեն(կոմաներեն), թաթարերեն ձեռագրերն ալեկի վաղ օրինակներն են Հայատառ թուրքերեն գրականության և հիմնականում ստեղծվել են 14-15-րդ դարերում Արևմտյան Ուկրաինա-Լեհաստանում, Ղրիմում հաստատված Հայերի կողմից<sup>6</sup>:

Հայատառ զփչաղերեն բառարաններին անգրագարձել է Հ. Ամալյանն իր 15-17-րդ դդ. ընդգրկող բառարանագրական մեր հուշարձաններին նվիրված իր աշխատություններում: Այս առթիվ կարևոր են Բ. Չուգասոյանի հետադոտությունը, Վ. Գրիգորյանի և Ա. Պիսովիչի համատեղ հոդվածները<sup>7</sup>:

Նշանակալի թիվ են կազմում Հայատառ թուրքերենի օգտագործմամբ բազմալեզու բառարանները: Հայերենի (գրաբար, աշխարհաբար), Հայատառ թուրքերենի հետ բառարաններում օգտագործված հիմնական լեզուներն են թաթարերենը, արաբերենը, պարսկերենը, անգլերենը, ֆրանսերենը, իտալերենը, լատիներենը, հունարենը, սլավոներենը: Այս լեզուներից շատերը ևս Հայատառ են գրի առնվել:

Կան ձեռագրեր, որոնց գրելու տեղը և հեղինակը, ժամանակը Հայտնի են եղել: Հայտնի է եղել նաև գրա գտնվելու տեղը, սակայն հետագայում հետքը կորել է, և մնացել են միայն մատենագիտական տվյալները: Այդ-

<sup>5</sup> R. H. Kevoorkian; A. Ter-Stepanian. Manuscripts armeniens de la Bibliothèque nationale de France. Paris, 1998, p. 911-914.

<sup>6</sup> Ուկրաինայում ապրող Հայերի կյանքի, սովորույթների, կրոնի մասին առաջին անգամ ուսումնասիրական ակնարկով հանդես է եկել Յան Լասիցկին 15-րդ դ.: Այս և 16-17-րդ դդ. Ուկրաինայի Հայոց հասարակական հաստատությունների մասին սկզբնաղբյուրների ուսումնասիրություններ է հրատարակել Յա. Դաշկևիչը: Я. Р. Да ш к е в и ч. Ян Ласицкий и его очерк об армянах на Украине в 70-х гг. XVI ст. — «Բանբեր Մատենադարանի», 1962, հ. 6, էջ 471-496, ն ու յ ն ի՝ Армянские общественные печати на Украине (в XVI- XVIII вв.). — «Բանբեր Մատենադարանի», 1973, հ. 11, էջ 471-496:

<sup>7</sup> Հ. Ս. Ա ն ս ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 1220: Հ. Մ. Ա մ ա լ յ ա ն, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները V-XV դդ. Երևան, 1966: ն ու յ ն ի՝ Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները XVI-XVII դդ. Երևան, 1971, էջ 120-126: Բ. Չ ու գ ա ս ո յ ա ն. Գեորգ Ղպիր Պայտեցու կյանքի և գործունեության տարեգրություն. 1737-1811, Երևան, Գ, 1994: Վ. Գրիգորյան և Ա. Պիսովիչ (Լեհաստան), Հայատառ լեհերեն վավերագրերը. — «Բանբեր Մատենադարանի», հ. 7, 1964, էջ 225-236: Այս դրականությունն ուսումնասիրության հատուկ բնագավառ է և զբաղեցրել է բազմաթիվ եվրոպացի գիտնականներին: Գալով այդ առթիվ թուրք պատմագրությունը, ապա թաթար թեքերը Հայատառ թուրքերենի մասին դրած իր մի հոդվածում Հայատառ զփչաղերենի առաջագույն «բացատրում» է դեռևս 13-րդ դ. Ղրիմի զփչաղական-թուրքական պետության տարածքում թուրքերի և քոչվոր Հայերի միջև սերտ համագործակցությունը ու սերտ հարաբերությունները, Հայերի մայրենի լեզվից հրաժարված և ամբողջովին թուրքերենը սեփականացրած լինելու հանգամանքով (ընդգծումը մերն է — Հ. Ս.): Տես՝ T a l a t T e k i n, Ermeni Alfabetiyle Türkçe — “Tarih ve Toplum”. Ist. 1984, N 44 s. 6-9.

պիսի օրինակ կարող է ծառայել Արթին Հինդօղլուի (1780–1840) Հայերեն-գերմաներեն-հայատառ թուրքերեն բառարանը (1840 թ.): Մյուսը՝ Հայերեն-իտալերեն-թուրքերեն 1726 թ. առաջ դրի առնված, Անկարայից ոչ հեռու՝ Կարմիր վանքում պահվող 522 էջերից բաղկացած անհայտ հեղինակի բառարանն է, որի ճակատագիրն այսօր անհայտ է: Այս բառարանները, որպես կանոն, այբբենական դասավորությամբ են:

Հիշյալ բառարանների մեծ մասի կազմողների անունները, ավաղ, հայտնի չեն: Գիտենք Մինաս վրդ. Ամերիկյանի (1827–1909), Գևորգ Տեր-Հովհաննիսյանի, Գևորգ Պալատեցի, դիարբեքիցի Հակոբ Դպրի, պոլսեցի Հարություն դասատուի, Ահալ Կալպակչյանի, Գրիգոր Փեշտիմալձյանի, Ջադրեան Ն. Եփրեմի, Հակոբոս Պողաճյանի, Միքայել Ռեստեյի, Անդրեաս Շուքուրյանի անունները: Միևիթարյան միաբանության անդամների հավաքական հեղինակած բառարանները, որպես կանոն, կոթողային դործեր են և մինչև օրս էլ չեն կորցրել իրենց դիտական ու կիրառական նշանակությունը: Բարեբախտաբար, դրանք, ինչպես և Միևիթարյան միաբանության գիտնական վարդապետների հետադայի աշխատություններն արժանացել են շքեղ տպագրությունների, որոնք ավելի կիրառական են գարձրել դրանք:

Կան բառարաններ, որոնք կցվել են որևէ ձեռագրի<sup>8</sup> կամ կազմում են որևէ հիմնական երկի մաս, առանձին գլուխներ: Այս բառարանները ծառայում են այն բնագրին, որի մաս էին կազմում<sup>9</sup>: Դրանք հիմնականում այնպիսի գործեր են, որոնք գրված են խրթին լեզվով, արաբերեն, պարսկերեն դժվարամարս բառերի օգտագործմամբ: Այդպիսի գործերից է Պողոս Ագրիանապոլսեցու «Ջանազանութիւն հինդ դարուց»-ի հայատառ թուրքերեն «Պէշ տէհր Ֆէրդի» գրքին կից բառարանը: Կան ուղղակի բացատրական բառարաններ՝ տարբեր ժողովածուներում<sup>10</sup>: Երբեմն դրանք մեկ կամ մի քանի թերթ են կազմում, այն էլ՝ որոշակի տառերով սկսվող բառերի: Ամենայն հավանականությամբ, դրանք որևէ բառարանից պահպանված հատվածներ են<sup>11</sup>: Որոշակի թիվ են ներկայացնում բժշկարանների, դեղագրերի ժողովածուների մաս կազմող բառարանները<sup>12</sup>: Դրանք

<sup>8</sup> Երևանի Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ), 1798 թ. մի երազահանի վերջում (նոր ձեռագրերի հավաքածու, ձեռ. №160) գտնում ենք 1826 թ. հայատառ ոտուերեն և հայատառ թուրքերեն բառարան՝ 323 գործածական բառերի:

<sup>9</sup> ա. ՄՄ ձեռ. №2906. «Վեցհազարեակ» հայերեն և հայատառ թուրքերեն: 20բ-22բ՝ բառարան աստղագուշակից օգտվելու համար:

բ. էջմիածնի Վեհարանի մատենադարանի ձեռ. №82. Ասյտի Ռահմանի Թէպրիգեցույ «Բանալի Աստեղաց». 92բ-96ա. բառարան ձեռագրում գործածված արաբերեն, թուրքերեն և պարսկերեն բառերի հայերենները:

<sup>10</sup> ՄՄ ձեռ. №3869. 118ա-47բ հայերեն և հայատառ թուրքերեն իսրը բացատրական բառարան և 147ա-73բ հայատառ ֆրանսերեն-հայերեն և հայատառ թուրքերեն բառարան:

<sup>11</sup> ա. ՄՄ ձեռ. №5373. 99ա՝ միայն Գ և Դ տառերով սկսվող բառերի բառարան հայերեն-հայատառ թուրքերեն բառարան:

բ. ՄՄ ձեռ. №6577. էջերի դատարկ մասերում տեղ է գտել հայատառ արաբերեն-հայերեն-հայատառ թուրքերեն բացատրական մի բառարան, որը հետագայի հավելագրություն է:

գ. ՄՄ ձեռ. №9559. 250ա՝ բառարան միայն Ա տառով սկսվող բառերի, թերի:

<sup>12</sup> ա. ՄՄ ձեռ. №9583. 203ա-251բ՝ բառգիրք բժշկարանի:

բ. ՄՄ ձեռ. №9789. Անուանք կենդանակերպից արաբերեն, թաթարերեն, պարսկերեն, թուրքերեն, հունարեն: Անուանք մոլորակաց արաբերեն, թուրքերեն, պարսկերեն, հունարեն: Բոլոր լեզուներն էլ դրի են առնված հայատառ:

նաև Հիվանդութունների, դեղատոմսերում օգտագործվող նյութերի, տարրեր լեղուններով գիտական տերմինների բառարանների արժեքավոր օրինակներ են<sup>12</sup>: Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրական հավաքածուի մաս է կազմում 1970 թ. Աթենքում կազմված Նուպար Թողանի «Բառարան թուրք-հայերէն» աշխատութեան առաջին մասը (130 էջ)<sup>14</sup>. «Գրական, գիտական, մասնագիտական բառերու ֆրանսերէն, լատիներէն եւ հելլեներէն հոմանիչներ: Ճոխ առումներ, ասութիւններ, ոճեր, առածներ, ծածկաբանութիւններ (արցո)»: Սա մեզ հայտնի ամենաուշ շրջանի ձեռագիր բառարանն է:

Մեր ժողովրդի պատմական ճակատադիրն այնպիսին է եղել, որ նա կարիք է ունեցել սովորելու այլ, հատկապես տիրող ժողովուրդների լեզուն և հաճախ օգտագործելու այն առօրյա խոսակցութեան մեջ: Դա առավել կամ նվազ չափով վերաբերում է հատկապես արաբերենին, պարսկերենին, թուրքերենին, մասամբ նաև քրդերենին բուն Հայաստանում, և վրացերեն, ղվիչաղերեն, ռուսերեն, լեհերեն, հունգարերեն, ռումիներեն և այլ լեզուներին հեռու կամ մոտիկ հայաշատ գաղթավայրերում, ինչպես ճիշտ նկատել է միջավայրի արևելագետ Հակոբ Փափազյանը<sup>15</sup>:

գ. ՄՄ ձեռ. №10661. Հեքիմարան. 64ա-71բ՝ բառարան 212 գեղատոմսերում օգտագործված նյութերի այբբենական կարգով:

դ. ՄՄ ձեռ. №10912. բժշկարան. 16ա-17բ, 170ա-182ա՝ Բառարան Հիվանդութեանց կամ անևանք Հիւանդութեան այբբենական կարգով: 280բ-281բ՝ Յանկ քանի մը մանուկից Ա-Թ և Մ տառերը:

<sup>13</sup> ա. ՄՄ ձեռ. №9697. «Արուեստաբանութիւն» (Բիմիա) Հայերեն և Հայատառ թուրքերեն երկլեզու ձեռագրին կից տերմինների գործածութեան բառարան՝ 126ա-8բ:

բ. Վիեննայի Մխիթարյան միաբանութեան մատենադարան. ձեռ. №1388. Գիտական բառարան Հայերէն-թուրքերէն-ֆրանսերէն, 1901, Կ.Պոլիս, թ. 216:

<sup>14</sup> ՄՄ ձեռ. №88 (նոր ձեռագրերի հավաքածու):

<sup>15</sup> Հ. Փ ա փ ա գ յ ա ն, Մեսրոպատառ այլալեզու գրականութեան մասին. — «Բանբեր Մատենադարանի», հ. 7, Երևան, 1964, էջ 210: